Կազմված է՝ 21.06.2021թ.
Բաղկացած է 3 էջից

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 20-21-36

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

21 հունիսի 2021թ. ք. Երևան

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ստեղծված և գործող կազմակերպություն, գրանցման համար՝ 211.171.1039517, գրանցման ամսաթիվ՝ 02.10.2018թ., իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27) (այսուհետ՝ «ՀՖՖ» կամ «Կազմակերպություն») Կարգապահական և էթիկայի կոմիտեի նիստը (այսուհետ՝ «Նիստ») կայացավ 2021թ. հունիսի 21-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստին մասնակցել են հետևյալ անդամները՝

Նախագահ՝	*Կարեն Հովհաննիսյան*
Փոխնախագահ՝	*Ռուբեն Սինոյան*
Քարտուղար և Անդամ՝	*Հայկուհի Ռշտունի*
Անդամներ՝	*Բաբկեն Ղալոյան*
	Տիգրան Իսրաելյան

Կոմիտեի նիստն անցկացնելու համար պահանջվող քվորումն ապահովված էր:
Կոմիտեի նիստը նախագահում էր ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ Կարեն Հովհաննիսյանը, նիստն արձանագրում էր քարտուղար/անդամ Հայկուհի Ռշտունին:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ

ՀԱՐՑ 1:

1. 12/06/21թ. «ՈՒրարտու-04»-«Ակադեմիա-1-05» (18Ա053) խաղի մասին. Ոստիկանների չներկայանալու պատճառով խաղը չի կայացել:

ՈՐՈՇՈՒՄ 1:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 3.03, 4.01, 13-րդ և 36-րդ հոդվածի 22-րդ կետով,

Կողմ	5 ձայն
Դեմ	0 ձայն
Ձեռնպահ	0 ձայն

քվեարկության արդյունքով ՈՐՈՇԵՑ՝

«ՈՒրարտու-04» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով, «ՈՒրարտու» ֆուտբոլային ակումբին տուգանել 20000 ՀՀ դրամի չափով:

Նախագահ՝	Կարեն Հովհաննիսյան
Փոխնախագահ	Ռուբեն Սինոյան
Քարտուղար և անդամ՝	Հայկուհի Ռշտունի
Անդամներ՝	Բաբկեն Ղալոյան
	Տիգրան Իսրաելյան

Հիշեցում՝

1. ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի Հոդված 12-ի համաձայն՝ Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման կարգ.

   Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումները Ֆուտբոլային սուբյեկտների կողմից կարող են բողոքարկվել Բողոքարկման Կոմիտե՝ որոշման մասին պաշտոնական հրապարակման պահից 7 (յոթ) օրվա ընթացքում:

   Ուշադրություն՝
   Հոդված 36-ի և 37-ի կիրառվող պատժամիջոցների տուգանքները սահմանված են ՀՀ Մ-18 Մ-16 առաջնություններին մասնակցող ֆուտբոլիստների համար: Մ-14 առաջնություններին մասնակցող ֆուտբոլիստների տուգանքները սահմանված են նախորդի՝ 50%: